Հաստատված է
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 4 նիստում
Գիտական խորհրդի նախագահ,
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ՀՊՄՀ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

I. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՊՄՆ-ում ուսանողի գնահատման հիմնական նպատակներն են՝

- հավաստել, որ ուսանողը ձեռք է բերել որակավորման առնչվող գիտելիք, հմտություն և կարողություն,
- որոշարկել ուսանողի գիտելիքի կամ հմտությունների բացերը, ինչը հնարավորություն կտա նրան անցնել անհրաժեշտ լրացուցիչ ուսումնառություն:
- գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց՝ դյուրացնելով դասընթացի առանձին բաժինների յուրացմամբ առարկայական հմտությունների և կարողությունների ձեռքբերման ընթացքը և խթանելով ուսանողի անհատական և ինքնուրույն արտալսարանային աշխատանքը,
- ուսումնառության գործընթաց ներմուծել մրցակցության տարրեր, բարելավել դասահաճախումներն ու ուսանողի ակտիվությունը, բարձրացնել ուսանողի կատարողական կարգապահությունը, ապահովել առարկայի ուսուցման հետադարձ կապը,
- անհատական/ թիմային առաջադրանքների և ընթացիկ, միջանկյալ,հանրագումարային ամփոփիչ ստուգումների օգնությամբ բարելավել դասընթացի գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների ու կարողությունների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչներ և դրանց կարևորության աստիճանը,
- ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատում՝ ըստ մասնագիտության կրթական ծրագրի մասնագրի կոմպետենցիաների և ուսուցման վերջնարդյունքի ներկայացվող պահանջների:

ՀՊՄՀ-ում ուսանողի գնահատման ձևերը հիմնված են՝

- <u>Չափանիշների վրա</u>. ուսանողների կարողականների գնահատում մասնագիտական մասով սահմանված *կրթական (որակավորման) չափորոշչի* կատարման չափանիշներին համապատասխան:
- <u>Վկայությունների վրա</u>. գնահատում հիմնված ուսանողների կարողականների և կարողությունների <u>բավարար</u>, <u>վավեր</u>, <u>իրական</u> (ներկա պահին առկա) և <u>փոխանցելի</u> *վկայությունների* վրա, որոնք արտացոլում են կարողությունների

- համապատասխանությունը որակավորման չափորոշչի մասնագիտական մասով սահմանված պահանջներին:
- **<u>Ներառական և մասնակցային</u>.** գնահատման գործընթաց որն ենթադրում է ինչպես ուսանողի, այնպես էլ դասախոսի ակտիվ մասնակցությունը: Առաջինը պետք է պատրաստի կատարողականության ընդունելի վկայություններ, իսկ երկրորդը պետք է աջակցի դրան և կառուցողական հետադարձ կապ ապահովի ողջ գործընթացի շրջանակներում: Ուսանողը պատասխանատու է կարողունակության վկայությունների պատրաստման, իսկ դասախոսը՝ ուսանողի գործողությունները պլանավորելու ու կազմակերպելու, կարողության ցուցադրման համար անհրաժեշտ գնահատման առաջադրանքները (խնդիրները) սահմանելու համար:

ՀՊՄՀ-ում գնահատման համակարգը միտված է նպաստելու է ուսանողի ուսումնառությանը:

Ուսանողի գնահատումը կարող է լինել.

- **Դիագնոստիկ՝** նպաստում է ուսանողների թույլ և ուժեղ ունակություններ և ներուժ ունեցող ուսանողների բացահայտմանը,
- **Ընթացիկ,միջանկյալ,հանրագումարային՝** նպաստում է ուսանողի առաջխաղացմանը կամ որակավորման ժամանակ ուսանողի մասնագիտական ձեռքբերումների մասին պատկերացում կազմելուն:
- **Ձևավորող՝** թվային գնահատականից զատ՝ դասախոսի կամ բարձր որակավորում ունեցող մասնագետի բանավոր կամ գրավոր հայտնած հատուկ կարծիքները նպաստում են ուսանողի գիտելիքների հարստացմանը, ունակությունների բացահայտմանը և մասնագիտության հանդեպ վերաբերմունքի ձևավորմանը:
- **Արժեվորող՝** նպաստում է դասընթացի կամ մասնագիտության կրթական ծրագրի վերաբերյալ արտաքին գնահատմանը:

II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՁԵՎԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ

1. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՁԵՎԵՐԸ.

Կրեդիտային և մոդուլային ուսուցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում կիրառվում են ուսանողների գիտելիքների վերահսկման և գնատաման հետևյալ ձևերը.

- ընթացիկ ստուգում և գնահատում
- միջանկյալ ստուգում և գնահատում
- հանրագումարային ստուգում և գնահատում

1.1. ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

1.1.1. Ընթացիկ շարունակական ստուգումը առարկայի դասավանդման ամբողջ ընթացքում ուսանողների գիտելիքների աստիճանական ստուգման և գնահատման օպերատիվ ձև է:

1.1.2. Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածության մակարդակը գործնական, լաբորատոր և սեմինար պարապմունքներին, ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքը, ուսումնական նյութի յուրացման աստիճանը, լսարանային աշխատանքներին մասակցության մակարդակը և այլն:

1.1.3.Ընթացիկ ստուգման ցանկացած ձևում դասախոսն իրականացնում է տվյալ կուրսի կամ հոսքի ուսանողների անհատական կամ թիմային պատրաստվածության մակարդակի բացահայտումն ու գիտելիքների որակի գնահատումը:
1.1.4.Ընթացիկ ստուգման գնահատման չափանիշները և մեխանիզմները քննարկվում և հաստատվում են համապատասխան ամբիոնի կողմից համաձայն համալսարանում սահմանված նորմերի և դասախոսների կողմից ամրագրվում համապատասխան առարկայի նկարագրում:
1.1.5. Ընթացիկ ստուգումներն անց են կացվում ըստ առարկայական նկարագրի տվյալ դասընթացը վարող դասախոսի կողմից,առարկայի դասացուցակով հատկացված ժամերին:
1.1.6.Տվյալ դասընթացի ընթացիկ ստուգումներին ուսանողի բացակայություն և հանձնարարականների կատարման թերացումները կարող են ազդել ուսանողի կուտակային գնահատականի վրա:

1.2. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ

1.2.1. Միջանկյալ ստուգումը ուսանողի գիտելիքների վերահսկման ձև է՝ ուսանողի կողմից ուսումնական առարկայի ծրագրի համապատասխան տրամաբանական թեմատիկ հատվածի յուրացման որակի ընդհանրական վերահսկում, որն անց է կացվում ուսումնական ներառարկայական յուրաքանչյուր մոդուլի ավարտին՝ նախորոշված ձևերին ու ժամանակացույցին համապատասխան:
1.2.2.Միջանկյալ ստուգումների քանակը սահմանվում է առարկայի տվյալ կիսամյակի դասախոսությունների ժամածավալով.
1.2.3.Ուսանողի մասնակցությունը միջանկյալ ստուգումին պարտադիր է: Տվյալ դասընթացի միջանկյալ ստուգումներին ուսանողի բացակայություն և կատարման թերի աշխատանքը կարող են ազդել ուսանողի կուտակային գնահատականի վրա:
1.2.4.**Միջանկյալ ստուգումը**,որպես կանոն, **իրականացվում է գրավոր տեսքով**: Ամբիոնի կողմից ֆակուլտետի դեկանին ներկայացված ***հիմնավորման ու թույլտվության ստացման դեպքում միջանկյալ ստուգումները կարող են կազմակերպվել գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ***:
1.2.5.Միջանկյալ ստուգումները անցկացնում են տվյալ առարկան դասավանդող դասախոսը ընթերակայի մասնակցությամբ, միջանկյալ ստուգումներին հատկացված շաբաթվա շրջանակներում, առանձին ժամանակացույցով առարկային հատկացված օրերին:
Ստուգումների անցկացման նկատմամբ հսկողությունը իրականացվում է դեկանատի և ուսումնական վարչության կողմից:
1.2.6.Միջանկյալ ստուգումների ենթակա թեմատիկ հատվածի բովանդակությունը, հարցաշարերը, ժամանակացույցը և ստուգման չափորոշիրները, ինչպես նաև ***գնահատման չափանիշներն ու մեխանիզմները*** ամրագրվում են առարկայի նկարագրում և տրամադրվում ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում):
1.2.7.Միջանկյալ ստուգումների ժամանակացույցը կազմում են ֆակուլտետները և հաստատվում ուսումնամեթոդական վարչութան կողմից: Միջանկյալ ստուգումներն, որպես կանոն, անց են կացվում ուսումնառության տվյալ կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում:
Միջանկյալ ստուգումների օրերին ուսանողն ազատվում է դասերից:

1.3. ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄ

1.3.1.Հանրագումարային ստուգումը ուսանողների գիտելիքների որակի գնահատման վերջնական արդյունքն է՝ ուսանողի կողմից ուսումնական առարկայի կիսամակային բովանդակության ամբողջական յուրացման որակի հանրագումարային ամփոփում, որն անց է կացվում ուսումնական կիսամյակի 17-20-րդ շաբաթներում՝ համաձայն նախորոշված ձևերի և ժամանակացույցի:

1.3.2.**Հանրագումարային ստուգումը** որպես կանոն, իրականացվում է ***բանավոր և կամ գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ:***

1.3.3. Հանրագումարային ստուգումների անց կացման ձևը, հարցաշարերը և ***գնահատման չափանիշներն ու մեխանիզմները*** ամրագրվում են առարկայի նկարագրում և տրամադրվում ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում):

1.3.4.Հանրագումարային ստուգումների անցկացման ժամանակացույցն ամբիոնների հետ համաձայնեցված հաստատում է ֆակուլտետի դեկանը: Անցկացման նկատմամբ հսկողությունը իրականացվում է դեկանատի և ուսումնամեթոդական վարչության կողմից:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատա ծավալից,դասավանդման և ուսումնառության մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման մեջ ՀՊՄՀ-ում դասընթացներն ըստ գնահատման կառուցվածքի կազմում են 2 խումբ՝

- ***Հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթաց***
- ***Միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթաց***

2.1. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐՈՎ ԱՎԱՐՏՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑ

I. Միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացի գնահատումը կիսամյակի արդյունքնում դասընթացի ելքային արդյունքների յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է կիսամյակի ընթացքում ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի շարունակական կուտակային գնահատման միջոցով: ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում ուսանողի մասնակցությունը առարկայի նկարագրով սահմանված բոլոր գործոնների ստուգմանը և ամփոմանը պարտադիր է:

2.1.1. Միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացից ուսանողի ստացած կիսամյակային վարկանիշային միավորը (**Գարդ.**) ձևավորվում է կիսամյակում ընթացիկ շարունակական և միջանկյալ ստուգումներին կուտակած միավորների հիման վրա:

2.1.2. Միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացի գնահատման բաղադրիչներ /գործոններ են գնահատման այն տարատեսակները (օրինակելի հնարավոր ցանկը տես Հավելված 1-ում)/, որոնք ընտրվել են և հաստատվել դասընթացը կազմակերպող ամբիոններում համապատասխան դասախոս/ներ/ի մասնակցությամբ և հավաստում են ուսանողների ցուցաբերած գիտելիքի, կարողության և հմտության համապատասխանությունը առարկայի վերջնարդյունքին, ուսանողի պատրաստվածության մակարդակը դասախոսություններին, գործնական, լաբորատոր և սեմինար պարապմունքներին,ինչպես նաև կատարած ինքնուրույն աշխատանքը, ուսումնական

նյութի յուրացման աստիճանը, լսարանային աշխատանքներին մասակցության աստիճանը և այլն:

2.1.3. Միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացի գնահատականը ձևավորող և ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, գնահատման գործոնները, մեթոդներն ու չափանիշները մուտքագրվում են առարկայական նկարագիր և տրամադրվում ուսանողներին կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում:

2.1.4. Միջանկյալ ստուգում/ներ/ով ավարտվող դասընթացի ամփոփիչ ստուգումներն անցկացվում են տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված վերջին հանդիպման ընթացքում (ուսանողը դասերից չի ազատվում):

2.2.8. Եթե ուսանողը հանձնել է դասընթացի գնահատման ենթակա բաղադրիչները/գործոնները և ունի կուտակային 60 կամ ավելի միավորներ, ապա տվյալ առարկայն համարվում է ստուգված /տառային գնահատական S/: Բացառություն են կազմում բնագիտական մասնագիտությունները, որոնց դեպքում ամբիոնի և ֆակուլտետի դեկանի համաձայնությամբ ցանկացած բաղադրիչ/ներ/ից (բացի հաճախում-մասնակցությունից) անցողիկ միավորի շեմը չհաղթահարած (վարկանիշային գնահատման 60 միավորը) առարկայի ամփոփիչ ընդհանուր գնահատականը չի ձևավորվում և այն ենթակա է վերահանձման՝ անկախ վաստակած կուտակային միավորից, լուծարման համար սահմանված ժամկետներում:

2.1.5. Եթե ուսանողը տվյալ դասընթացի բոլոր բաղադրիչների հանրագումարում չի հաղթահարում անցողիկ միավորի շեմը ապա գնահատումը իրականացվում է գնահատման սանդղակի Ux և U նշագրումներին ներկայացված պահանջներին համապատասխան:

2.1.6. Եթե վերահանձնման երկու հնարավորություն (Ux) ստացած ուսանողը չի բարելավում իր առաջադիմությունը (առարկայի վարկանիշային գնահատման 60 միավորը), սահմանվում է տվյալ դասընթացի վերահանձնման վերջնաժամկետ մինչև ՄԿԾ-ի վերջին ավարտական կուրսը, եթե այն տեղավորվում է 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի թույլատրելի շրջանակում, կամ հեռացվում է համալսարանից ակադեմիական վատ առաջադիմության համար:

2.1.7. Գնահատականը հրապարակելու պահից սկսած գնահատման հետ անհամաձայնության դեպքում ուսանողը իրավունք ունի բողոքարկելու այն համաձայն ՀՊՄՀ Որակի ապահովման ուղեցույցի 2.15-2.18 կետերի:

2.2. ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՄԲ ԱՎԱՐՏՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑ

II. Հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացի գնահատումը կիսամյակի արդյունքնում դասընթացի ելքային արդյունքների յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է կիսամյակի ընթացքում ուսանողի ընթացիկ աշխատանքի, միջանկյալ և հանրագումարային ստուգումների կուտակային գնահատման միջոցով: ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում ուսանողի մասնակցությունը առարկայի նկարագրով սահմանված բոլոր գործոնների ստուգմանը և ամփոմանը պարտադիր է:

2.2.1. Կիսամյակում դասավանդվող և հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացից, որպես կանոն, սահմանվում են միջանկյալ ստուգում/ներ/ և հանրագումարային ամփոփում: Հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացից

ուսանողի ստացած կիսամյակային վարկանիշային միավորը (բազմագործոն գնահատականը) (**Գարդ.**) ձևավորվում է կիսամյակում ընթացիկ աշխատանքի, միջանկյալ և հանրագումարային ստուգումների կուտակային գնահատման միջոցով:

2.2.2. Հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացի գնահատման բաղադրիչներ կարող են հանդիսանալ այն գործոնները (օրինակելի հնարավոր ցանկը տես Հավելված 1-ում) որոնք իրենց բնույթով թույլ են տալիս ամփոփել ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի արդյունքները ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային ստուգումների միջոցով: Հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացի գնահատման գործոնները ընտրում են դասընթացը կազմակերպող ամբիոնները համապատասխան դասախոս/ներ/ի մասնակցությամբ:

2.2.3. Հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացի գնահատականը ձևավորող և գնահատման ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, գնահատման գործոնները, միջանկյալ և հանրագումարայի գնահատումների անցկացման ժամանակացույցը ինչպես նաև գնահատման չափանիշներն ու մեխանիզմները մուտքագրվում են առարկայական նկարագրում և տրամադրվում են ուսանողներին կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում:

2.2.4. Հանրագումարային /նաև միջանկյալ/ ստուգումների անցկացման ժամանակացույցն ամբիոնների հետ համաձայնեցված հաստատում է ֆակուլտետի դեկանը: Հանրագումարային ստուգումների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:

Հանրագումարային ստուգումների ամփոփիչ տեղեկագրերը լրացվում են ժամանակացույցով սահմանված օրը, էլեկտրոնային և թղթային տարբերակով համապատասխան ֆակուլտետի դեկանատում:

2.2.5. Հանրագումարային ստուգումների անցկացման ժամանակացույցն ամբիոնների հետ համաձայնեցված հաստատում է ֆակուլտետի դեկանը: Հանրագումարային ստուգումների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնա մեթոդական վարչություն:

2.2.7 Հանրագումարային ստուգումների ամփոփագրերը լրացվում են ժամանակացույցով սահմանված օրը, էլեկտրոնային և թղթային տարբերակով համապատասխան ֆակուլտետի դեկանատում:

2.2.9. Եթե ուսանողը հանձնել է հանրագումարային ստուգմամբ ավարտվող առարկայի գնահատման ենթակա բաղադրիչները և ունի կուտակային 60 կամ ավելի միավորներ, ապա տվյալ առարկան համարվում է հաղթահարված /տառային գնահատական A, B, C, D. E/: Բացառություն են կազմում բնագիտական մասնագիտությունները, որոնց դեպքում ամբիոնի և ֆակուլտետի դեկանի համաձայնությամբ ցանկացած բաղադրիչ/ներ/ից (բացի հաճախում-մասնակցությունից) անցողիկ միավորի շեմը չհաղթահարած (վարկանիշային գնահատման 60 միավորը) առարկայի ամփոփիչ ընդհանուր գնահատականը չի ձևավորվում և այն ենթակա է վերահանձման՝ անկախ վաստակած կուտակային միավորից, լուծարման համար սահմանված ժամկետներում:

2.2.10. Եթե ուսանողը տվյալ դասընթացի բոլոր բաղադրիչների հանրագումարում չի հաղթահարում անցողիկ միավորի շեմը ապա գնահատումը իրականացվում է գնահատման սանդղակի Fx և F նշագրումներին ներկայացված պահանջներին համապատասխան:

2.2.11. Եթե վերահանձնման երկու հնարավորություն (Fx) ստացած ուսանողը չի բարելավում իր առաջադիմությունը (առարկայի վարկանիշային գնահատման 60 միավորը),

սահմանվում է տվյալ դասընթացի վերահանձնման վերջնաժամկետ մինչև ՄԿԾ-ի վերջին ավարտական կուրսը, եթե այն տեղավորվում է 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի թույլատրելի շրջանակում, կամ հեռացվում է համալսարանից ակադեմիական վատ առաջադիմության համար:

2.2.12. Գնահատականը հրապարակելու պահից սկսած գնահատման հետ անհամաձայնության 3.1. Բազմագործոնային համակարգը. դեպքում ուսանողը իրավունք ունի այն համաձայն ՀՊՄՀ որակի ապահովման ուղեցույցի 2.15-2.18 կետերի բողոքարկելու այն:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

3.1. *Դրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում:*

3.2. *ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում յուրաքանչյուր բաղադրիչներից դրական շեմը չբավարարող գնահատականի վերահանձնում կիսամյակի ողջ ընթացքում չի թույլատրվում, եթե ուսանողի գնահատականը կազմում է 60 կամ դրանից բարձր*:

3.3. Յուրաքանչյուր գործոնի ամփոփմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե ուսանողը մինչև այդ օրը ներառյալ, հիվանդության մասին գրավոր իրազեկում է դեկանատ, իսկ հիվանդության վերաբերյալ համապատասխան բժշկական տեղեկանքը ներկայացնում է մինչև բուժման շրջանի ավարտին հաջորդող օրը:

3.4. Հարգելի պատճառով յուրաքանչյուր գործոնի (ներառյալ միջանկյալ) ստուգումներին չներկայացած ուսանողներին իրավունք է վերապահվում այն հանձնել տվյալ կիսամյակի տեսական ուսուցման վերջին շաբաթի ավարտին, ըստ ամբիոններում սահմանված գրաֆիկի:

3.5. Վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են դեկանի հրամանով

3.6. Յուրաքանչյուր առարկայից սահմանվում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) երկու շրջան, եթե վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է Fx/Ux-ի և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքն ավելի է կամ հավասար 41-ի և քիչ է 60-ից: 41-59 միավորներ առաջադիմության դեպքում /Fx-Ux / լուծարման համար հատկացված ժամկետներում ուսանողը վերահանձնում է այն բաղադրիչ/ներ/ը, որից դրսևորել է ոչ բավարար առաջադիմություն:

3.7. Դասընթացներից չի սահմանվում ակադեմիական պարտքերի մարում կիսամյակի լուծարման համար հատկացված ժամկետներում, եթե տվյալ առարկայից ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է F/ U -ի և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ցածր է քան 40-ը:

40-ից ցածր միավորների դեպքում ուսանողը գնահատվում է՝Անբավարար /տառային գնահատական F կամ U/ չի թույլատրվում մասնակցել վերահանձնումներին: Սահմանվում է տվյալ դասընթացի վերահանձնման վերջնաժամկետ մինչև ՄԿԾ-ի վերջին ավարտական կուրսը, եթե այն տեղավորվում է 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի թույլատրելի շրջանակում: Սահմանված վերահանձման ժամկետում ուսանողի մասնակցությունը ամբիոնային լրացուցիչ խորհրդատվություններին պարտադիր է:

3.8. Դասընթացներից դրական շեմը չբավարարող առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման ընդհատման հանգամանքը /հեռացումները/ կարգավորվում են ՀՀ ԿԳՆ-ի համապատասխան կարգով:

III. ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՈՒսանողների գիտելիքների գնահատման համակարգը ենթադրում է բազմագործոնային գնահատում: Ուսանողի գնահատման ժամանակ արդյունավետ են և կիրառելի այն գործոնները (օրինակելի հնարավոր ցանկը տես Հավելված 1-ում), որոնք համադրելի են դասընթացի ավարտին ուսանողների ձեռքբերումներին և ուսումնառության վերջնարդյունքների նկարագրությամբ սահմանված գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին:

ՀՊՄՀ-ում գիտելիքների գնահատման բաղադրիչների/ գործոններ/ նվազագույն քանակ է սահմանվում՝ 3-ը և առավելագույն քանակը ՝ 4 միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացների և 5 հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացի համար:

Ուսանողի գնահատման գործոնները պետք է վկայեն ուսանողի ստացած գիտելիքների, ձեռք բերած կարողությունների և հմտությունների համապատասխանությունը հետևյալ չափանիշներին
(Հավելված 2) `

- *Գիտելիքի և իմացության ըմբռնում*
- *Ընդհանրական իմացության և կիրառական կարողություններ*
- *Փոխանցելի և փոխկիրառելի հմտություններ*

1.1. Գիտելիքի և իմացության ըմբռնումն ստուգվում և գնահատվում են գործոններով,որոնք վկայում են.

1.1.1. գիտելիքների, հասկացությունների մոտեցումների և մեթոդաբանության հստակ ընկալում և յուրացում,

1.1.2. ուսումնասիրվող ոլորտում առկա գաղափարներին, ընդունված արժեքներին և հեղինակավոր կարծիքներին ու քննարկումներին տեղեկացվածություն,

1.1.3. ուսումնասիրվող առարկայի և մասնագիտության կրթական ծրագրի համատեքստային խնդիրների և քննադատական գաղափարների ընկալում:

1.2. Ընդհանրական իմացությունն ու կիրառական կարողությունները ստուգվում և գնահատվում են գործոններով, որոնք վկայում են.

1.2.1. գաղափարների և կիրառվող մեթոդների վերաբերյալ քննադատական մտածողության դրսևորում,

1.2.2. փաստերը կամ գաղափարները համադրելու և վերլուծելու, կարևորագույն տարրերը ի մի բերելու կարողություն,

1.2.3. որոշումներ կայացնելու և խնդիրներ ձևակերպելու ժամանակ գիտելիքն ու փորձը կիրառելու կարողություն,

1.2.4. մտածելակերպի և կատարված աշխատանքի համակցում,

1.2.5. կատարված աշխատանքում ստեղծագործական միջոցների ընտրություն, ինչպես նաև կրթական նորագույն տեխնոլոգիաների տեղին կիրառում,

1.3. Փոխանցելի և փոխկիրառելի հմտությունները ստուգվում և գնահատվում են գործոններով, որոնք վկայում են՝

1.3.1. ուսանողի ինքնուրույն ուսուցում կազմակերպելու կարողությունը, հաղորդակցման հմտությունը,
1.3.2. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառելու կարողությունը,
1.3.3. խնդիրների լուծման հմտությունը,
1.3.4. ինքնավարությունն ու նախաձեռնողականությունը,
1.3.5. թիմային աշխատանքին ունակ լինելը,
1.3.6. ժամանակը արդյունավետ օգտագործելը,
1.3.7. այլոց դիտարկումներին պատշաճ արձագանքումը:

Յուրաքանչյուր դասընթացի /ՄԿԾ-ի շրջանակում ուսանողին գնահատելու համար կիրառվում են մի շարք գործոններ/բաղադրիչներ՝ ըստ չափանիշների: Ստորև ներկայացվում է օրինակելի ձևաչափ՝ ըստ որի յուրաքանչյուր առարկայի համար կատարվում է ընդհանուր գնահատականի տրոհումը: (Օրինակելի ձևաչափը տես Աղյուսակ 1)

Աղյուսակ 1

	Գործոն/բաղադրիչ *Բացահայտում է դասընթացի վերջնարդյունքից բխող չափանիշի (Գիտելիքի և իմացության ըմբռնում, Ընդհանրական իմացության և կիրառական կարողություններ Փոխանցելի և փոխկիրառելի հմտություններ)տիրապետումը*	**Մասնաբաժինը առարկայի գնահատման մեջ %**
1		_____%
2		_____%
3		_____%
4		_____%
5		_____%
		100 %

1.4. ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում **բաղադրիչներից**/ գործոններից **յուրաքանչյուրը գնահատվում է 100 միավոր**, **համաձայն առարկայի ընդհանուր գնատաման մեջ նրա տեսակարար կշռի,որը չի կարող լինել 10%-ից ցածր և 40-ից բարձր**:

Յուրաքանչյուր բաղադրիչի/գործոնի ընտրությունը և դրա ազդեցության չափը ընդհանուր գնահատման վրա որոշվում է ամբիոնի նիստում, քննարկվում և հաստատվում կոնկրետ դասընթացի ուսումնառության վրա ազդող տարբեր գործոնի/բաղադրիչի կարևորությունն ու առաջնայնությունը: Ամբիոնի յուրաքանչյուր դասընթաց կարող է ունենալ վերջնարդյունքներից բխող իր առանձնահատուկ, յուրահատուկ,սակայն ոչ կամայականորեն սահմանված բաղադրիչները/գործոնները:

1.5. Առարկային ամրագրված կրեդիտների քանակը, գիտելիքների գնահատման բաղադրիչները /գործոնները և դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը՝ արտահայտված տոկոսներով առարկայական նկարագրով տրամադրվում է ուսանողին դասընթացի առաջին շաբաթվա ընթացքում դասավանդվող դասախոսի կողմից:

1.6. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) կարող է ներառում է հետևյալ գործոնները/բաղադրիչները.
1.6.1. դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման և կամ մասնակցության օգնությամբ,
1.6.2. դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական կամ թիմային առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ և միջանկյալ ստուգումներ),
1.6.3. ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի հանրագումարային եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլ համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,
1.6.4. ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ ,միջանկյալ և հանրագումարային եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

2. Գնահատման սանդղակը և նշագրումը

2.1. Գիտելիքի ստուգումը և գնահատումը անցկացվում է առարկայական նկարագրով հաստատված առարկայական գործոնների/բաղադրիչների հիման վրա տառային սանդղակով՝ քննությամբ ավարտվող դասընթացների համար (A-F) նրա թվային համարժեքով (0-4), ստուգարքով ավարտվող դասընթացների համար (S-U) և վարկանշային գնահատմամբ (1-100) բոլոր դասընթացների համար: (Տես Աղյուսակ 2)

Աղյուսակ 2

Գնահատման բազմագործոն համակարգ	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը	ԿՓԵՀ / տառային գնահատական	Ուսանողների գիտելիքների բնութագիր	
100-97 96 - 90	4.0 3, 7	A	Անցողիկ գնահատականներ	Բավարարելի դրական գնահատում
89-85 84-80	3, 3 3, 0	B		
79 -70	2.7	C		
69-65	2.3	D		
64-60	2.0	E		
41-59	1.7	FX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ՝ որոշակի աշխատանքներ կատարելու և վերահանձնելու հնարավորություն տվյալ կիսամյակում լուծարման համար հատկացված ժամկետներում	Բավարարելի դրական գնահատում
40-ից ցածր		F	ԱՆԲԱՎԱՐԱՐ՝ ենթակա է վերահանձնմանք մինչև ՄԿԾ-ի վերջին կուրսի ավարտական կիսակյակը եթե այն տեղավորվում է 12 կրեդիտ	

			կազմող ակադեմիական պարտքերի թույլատրելի շրջանակում:	
100-60	4.0-2.0	S	Անցողիկ գնահատականներ	Միջանկյալ ստուգումներ ավարտվող դասընթացներ
41-59	1.7	U	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ՝ որոշակի աշխատանքներ կատարելու և վերահանձնելու հնարավորություն տվյալ կիսամյակում լուծարման համար հատկացված ժամկետներում	
40-ից ցածր		U	ԱՆԲԱՎԱՐԱՐ՝ ենթակա է վերահանձնման մինչև ՄԿԾ-ի վերջին ավարտական կուրսը եթե այն տեղավորվում է 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի թույլատրելի շրջանակում:	

2.2. Հանրագումարային ստուգմամբ ավարտվող ավարտվող դասընթացների միջանկյալ և հանրագումարային գնահատումը իրականացվում է տառային սանդղակով (A-F), վարկանշային գնահատմամբ (1-100) և նրա թվային համարժեքով (0-4) /Տես Հավելված 2;Հավելված 3/:

Հանրագումարային ստուգմամբ ավարտվող դասընթացների միջանկյալ և հանրագումարային ստուգումը ,որպես կանոն, իրականցվում է գրավոր ձևով: Ամբիոնի կողմից ֆակուլտետի դեկանին ներկայացված հիմնավորման ու թույլտվության ստացման դեպքում միջանկյալ ստուգումները ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից կարող են կազմակերպվել գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ և կամ բանավոր:

Միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացների շարունակական ստուգումը և գնահատումը գնահատվում է տառային սանդղակով (S- U) վարկանշային գնահատմամբ (1-100) և նրա թվային համարժեքով (0-4):

2.3. Միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացների ընթացիկ շարունակական ստուգումը ,որպես կանոն, իրականցվում է գրավոր ձևով: Ամբիոնի կողմից ֆակուլտետի դեկանին ներկայացված հիմնավորման ու թույլտվության ստացման դեպքում կախված գործոնի/բաղադրիչի տեսակից ստուգումները կարող են կազմակերպվել գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ և կամ բանավոր:

3. Գնահատման մեթոդաբանությունը

3.1. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային)

գնահատականը/վարկանիշային միավորը (**Գարդ.**) ձևավորվում է դասընթացի առարկայի նկարագրում նշված վերջնարդյունքից բխող չափանիշը բավարարող գործոններին /բաղադրիչներին տրված տոկոսներից /Տես Համադրելի է Աղյուսակ 1-ի ձևաչափին/

- դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության տոկոսից
- ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող՝ միջանկյալ ամփոփումների արդյունքներից (**ՏՔմիջ.)** ,
- կատարած անհատական, ինքնուրույն աշխատանքից(**Քինք.),**
- դասընթացի առանձնահատկություններից բխող այլ աշխատանքներից(**Քդա**),
- հանրագումարային եզրափակիչ ամփոփման / քննություն,ստուգարք/արդյունքից (**Քեզր.**), Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրիչներով վաստակած միավորների գումար՝

Գարդ. = Գմաս. + ՏՔմիջ. +Քինք + Քդա + Քեզր.:

IV . ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

4.1.Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

4.1.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ՀՊՄՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

4.1.2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

4.1.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

– Ծրագրային կրեդիտների քանակը,
- Որակավորման կրեդիտների քանակը,
– Վարկանիշային միավորները,
– Միջին որակական գնահատականը:

4.1.4. Որակավորման կրեդիտը (ՈԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է: Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար: ՎՄ հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց Թվային գնահատականների արտադրյալների գումար.

ՎՄ = Σ Կրեդիտ i Գ արդ i որտեղ Գարդi-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված թվային գնահատականն է:

4.1.5. Ուսանողների միջին որակավորման առաջադիմությունը **(ՄՈԳ)**

Ուսանողի ակադեմիական առաջադիմության միջին որակավորման գնահատականը (իրենից ներկայացնում է վերջնական և կշռված ցուցանիշ, որը հաշվարկվում է ուսման որոշակի ժամանակահատվածի համար (1 կիսամյակ, 2 կիսամյակ և այլն) բաժանելով վարկանիշային միավորները տվյալ ժամանակահատվածի որակավորման կրեդիտների վրա:

ՄՈԳ ցուցանիշի արժեքը կլորացվում է մինչև 0,01. **ՄՈԳ =R(m)/ ՈԿ,** որտեղ

R (m) - վարկանիշային միավորներն են,

ՈԿ - որակավորման կրեդիտներն են:

Տվյալ կիսամյակի արդյունքներով հաշվարկված **ՄՈԳ**-ը կոչվում է միջին որակավորման գնահատականի ընթացիկ ցուցանիշ:

Վերջնական **ՄՈԳ** (ուսման ամբողջ ժամանակահատվածի համար՝ հաշվարկվում է առանձին ուսման ժամանակահատվածի **ՄՈԳ**-ների հիման վրա, համաձայն բանաձևի, եթե այդ ժամանակահատվածի ուսումնական ծանրաբեռնվածությունը նույն աշխատատարությունն ունեն:

ՕՐԻՆԱԿ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ

Ֆակուլտետ կուրս խումբ Սկզնբական կրթության ֆակուլտետ / _____/ 1-1

Անուն Հայրանուն Ազգանուն Գոռ Էդուարդի Ավագյան

Աշնանային կիսամյակ	**Գնահատական**			
Դասընթացի անվանումը	**Կրե-դիտ**	**Վարկանիշային**	**Տառային**	**Թվային**
Դ ասընթաց 1	**10**	**98**	**A**	**4,0**
Դասընթաց 2	**6**	**95**	**A**	**3,7**
Դասընթաց 3	**4**	**88**	**B**	**3,3**
Դասընթաց 4	**4**	**93**	**A**	**3,7**
Դասընթաց 5	**4**	**75**	**C**	**2,7**

Դասընթաց 6	2	82	S	3,0
	ՈԿ 30			

ՈԿ =10 + 6 + 4 + 4 + 2 + 4 = 30
ՎՄ =10 x 4.0 + 6 x 3.7+ 4 x 3.3 + 4 x 3.7 + 2 x 3.0 + 4 x 2,7 =107,0
ՄՈԳ=107,0 / 30=3.57

ԾԿ	ՈԿ	ՎԿ	Կիսամյակային ՄՈԳ
30	30	107,0	3, 57

Գարնանային կիսամյակ	Գնահատական			
Դասընթացի անվանումը	Կրե-դիտ	Վարկանիշային	Տառային	Թվային
Դ ասընթաց 1	12	83	B	3,0
Դասընթաց 2	4	98	A	4,0
Դասընթաց 3	6	92	A	3,7
Դասընթաց 4	2	76	S	2,7
Դասընթաց 5	4	100	A	4.0
Դասընթաց 6	2	65	S	2,3
	ՈԿ 30			

ՈԿÎ=12 + 4 + 6 + 2 + 4 + 2 =30
ՎՄ =12 x 3.0 + 4 x 4.0 + 6 x 3.7+ 2 x 2.7+ 4 x 4 .0 + 2 x 2,3 =100,20
ՄՈԳ =107,0 / 30=3.34

ԾԿ	ՈԿ	ՎԿ	Կիսամյակային ՄՈԳ
30	30	120,0	3, 34

Ընդհանրացված արդյունք			
ԾԿ	ՈԿ	ՎԿ	Ամփոփիչ ՄՈԳ
60	60	207,20	3, 45

ՀԱՎԵԼՎԱԾ 1

	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԸ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Մանկավարժական իրավիճակների վերլուծություն	Իրադրային թեստեր (ուսումնական իրադրության իմիտացիոն մեթոդներ)	Ենթադրում են իրական իրավիճակների իմիտացիա /նմանակում/: Հաճախ կիրառվում է կոնկրետ իրավիճակի վերլուծության ձևով; Տարբերակներից է հաջորդական իրավիճակների մեթոդիկան, որտեղ յուրաքանչյուր նոր իրավիճակի լուծում առաջարկվում է նախորդի արդյունքների հիման վրա:
	Քեյսեր	Ինֆորմացիա, որը նկարագրում է իրականում տեղ գտած իրադարձություն՝ ի տարբերություն այլ իրադրային խնդիրների՝ գործնական, իմիտացիոն խաղերի: Կարող են ներկայացված լինել տպագիր, վիդեո, աուդիո և այլ եղանակներով: Պետք է ներառի. էքսպոզիցիա /ձևավորում/, առաջացում, լուծում, առաջ բերի ապրումակցում, կապված լինի մասնագիտական գործունեության հետ
Թ Ե Ս Տ Ե Ր	• Լրացման հարցեր	Ուսանողից պահանջվում է լրացնել առաջադրված պնդման մեջ բաց թողնված բառերը (մասերը):
	• Ընկալում	Առաջադրված տեքստին վերաբերող հարցեր, որոնց տրված պատաս-խանները գնահատում են ուսանողի՝ բառերի, արտահայտությունների, մասնագիտական տերմինաբանության ընկալումը:
	• Փակ հարցեր	Պահանջվում է տրված հարցերի պատասխանների տարբերակներից ընտրել ճիշտը: Պատասխանների որոշ տարբերակներ կարող են հիմնավոր թվալ, բայց ճիշտ չլինել:
	• Հարցերի և պատասխանների համապատասխանություն	Պահանջվում է գտնել համապատասխանություն տրված հարցերի և պատասխանների շարքերում:
	• Հակիրճ պատասխան պահանջող հարցեր	Այս տիպի հարցերը պահանջում են նախապես սահմանված՝ մի քանի բառից բաղկացած պատասխաններ և կարող են պարունակել նաև թվեր, գծապատկերներ, գրաֆիկներ, դիագրամներ և այլն: Թեև այս հարցերը նախատեսված են հիմնականում մնացորդային գիտելիքները ստուգելու համար, սակայն կարող են օգտագործվել նաև գիտելիքի, օրինակ՝ մաթեմատիկական հասկացությունների կիրառման ունակությունը գնահատելու համար:
	• Կառուցակարգված հարցեր	Կառուցակարգված հարցերի առանցքը որևէ իրավիճակի նկարագրությունն է, որին հաջորդում են դրան վերաբերող մի շարք հարցեր: Այդ

		նկարագրությունը կարող է պարունակել տեքստ, գծապատկեր, նկար, տեսագրություն և այլն:
	• **Այլընտրանքային պատասխանով հարցեր**	Այս տիպի հարցերի պարագայում ուսանողից պահանջվում է պատասխանել, արդյոք բերված պնդումը ճիշտ է, թե սխալ: Սովորաբար օգտագործվում է տեղեկություններ մտաբերելու կամ տարանջատելու ունակությունները գնահատելու համար:
	Թղթապանակ / Պորտֆոլիո /	Թղթապանակ ասելով՝ հասկանում են անձնական ձեռքբերումների գրանցման, հավաքագրման և գնահատման մատյան,որտեղ հավաքվում, դասակարգվում են ուսանողի աշխատանքները՝ դրանց արդյունքները, որպեսզի հետագայում վերլուծի, կատարված աշխատանքներն ու շտկումներ կատարի, գնահատի կատարածը, պլանավորի իր հետագա անելիքները: Թղթապանակի առավելություններն են. • խրախուսում ենք ուսանողին, նրա սովորելու գործընթացը • ուսանողը դառնում է ակտիվ, մասնակցում է իր սովորելու գործընթացի կազմակերպմանը • ձևավորվում է սովորելու նպատակ • ուսումնառության վերջնական արդյունքը ուսանողը կարող է կանխատեսել հենց սկզբից • ուսանողը գիտի իր յուրաքանչյուր քայլի նպատակը • վերլուծական աշխատանքների լայն հնարավորություն է ընձեռում • որոշ ժամանակ անց ուսանողը կարող է նայել անցածին, ստացված արդյունքները համադրել • պարզ երևում են առաջընթացը և դրական փոփոխությունները • թղթապանակն իր մեջ կարող է ընդգրկել բազմազան տեղեկատվություն՝ տեքստեր, նկարներ, ձայնագրություններ, ֆիլմեր, ցուցադրություններ • այն կարելի է հեշտությամբ փոփոխել, լրացումներ կատարել • դրանք հասանելի են բոլորին:
Գրավոր ստուգում և բանավոր հարցում	• **Բանավոր (կամ անհատական) հարցազրույց**	Սա կառուցակարգված զրույց է (սովորաբար՝ դեմ առ դեմ), անմիջականորեն ուսանողից տեղեկություններ ստանալու նպատակով: Այս գործիքը հատկապես կիրառելի է, երբ անհրաժեշտ են գործընթացների իմացության կամ փորձառական ուսումնառության վկայություններ: Պատասխանները կարող են արձանագրվել հարցաթերթի տեսքով:

	• **Հարցաթերթ**	Հարցաթերթի միջոցով, ըստ էության, իրականացվում է կառուցակարգված գրավոր հարցազրույց, որը վերաբերում է կատարողականության որոշակի բնագավառի: Ի տարբերություն անհատական հարցազրույցի՝ սա իրականացվում և քննվում է ստանդարտ պայմաններում:
	• **Էսսե**	Փոքր ծավալով և ազատ բնույթի շարադրություն է, որը ներկայացնում է հեղինակի անհատական տպավորությունը կոնկրետ հարցերի նկատմամբ:
Բանավոր ներկայացում	**Զեկուցում, ռեֆերատ, PP-ներկայացում**	Ուսանողից պահանջվում է ներկայացնել նախապես պատրաստված խոսք՝ հղման, զեկուցման կամ կարծիքի արտահայտման տեսքով: Բանավոր ներկայացումը կարող է օգտագործվել որպես գրավոր պատասխանի այլընտրանք կամ որպես ինքնուրույն մեթոդ (եթե, օրինակ՝ անհրաժեշտ է գնահատել ուսանողի բուն բանավոր խոսքը):
Գործնական աշխատանք	• **Կատարում**	Ուսանողից պահանջվում է որոշակի պայմաններում ցուցադրել որևէ գործնական խնդրի կատարում՝ դրսևորելով համապատասխան հմտություններ, տեխնիկա, գիտելիք և ընկալում:
	• **Գործնական վարժություն**	Ուսանողից պահանջվում է ցուցադրել մի շարք գործնական հմտություններ: Գնահատումը կարող է իրականացվել գործողությունների արդյունքի (արտադրանքի), դրանց ընթացքի կամ այդ երկուսի համադրության հիման վրա:
	• **Առաջադրաք**	Հանձնառությունը որևէ խնդիր լուծելու առաջադրանք է՝ հստակ ուղեցույցներով, կառուցվացքով և տևողությամբ: Հանձնառությունն ավելի կառուցակարգված է և սակավ ազատ, քան նախագիծը: Մեթոդաբանության ու բովանդակության տեսանկյունից ուսանողներին բավական սահմանափակ ընտրության հնարավորություն է տրվում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Ուսանողը գնահատվում է՝

«A» – եթե լիարժեք մասնակցել է լսարանային պարապմունքներին, չունի բացթողումներ, պահանջվող առաջադրանքները կատարել է բարձր որակով, ներկայացրել է հանձնարարված քանակի բարձրակարգ արտալսարանային ինքնուրույն աշխատանքներ, գործուն մասնակցություն է ունեցել սեմինար և պրակտիկ աշխատանքներին, ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային ամփոփումներին դրսևորել է գիտելիքի գերազանց,ստեղծագործական, բացառիկ մակարդակ:

«B» – եթե դրսևորել է լավ արդյունք, լավ է մասնակցել լսարանային պարապմունքներին,ունի հարգելի բացթողումներ , պահանջվող առաջադրանքները կատարել է հնարավորինս բարձր որակով, ներկայացրել է հանձնարարված քանակի որակյալ արտալսարանային ինքնուրույն աշխատանքներ, մասնակցություն է ունեցել սեմինար և պրակտիկ աշխատանքներին, ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային ամփոփումներին դրսևորել է գիտելիքի հիմնական խնդրի վերաբերյալ որոշ սխալների մի քանի դեպքեր, ունի կայուն գիտելիքներ:

« C» – եթե դրսևորել է գիտելիքների ընդունելի մակարդակ, վատ չէ մասնակցել լսարանային պարապմունքներին, ունի քիչ թվով բացթողումներ , պահանջվող առաջադրանքները կատարել է պարտաճանաչ և ընդունելի որակով, ներկայացրել է հանձնարարված քանակի արտալսարանային ինքնուրույն աշխատանքներ, մասնակցություն է ունեցել սեմինար և պրակտիկ աշխատանքներին, ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային ամփոփումներին դրսևորել է թերություններ,որոնք զգալի չեն վերջնարդյունքի տեսանկյունից:

«D» – եթե դրսևորել է գիտելիքների ընդունելի մակարդակ, մասնակցել լսարանային պարապմունքներին, ունի թույլատրելի քանակի բացթողումներ, պահանջվող առաջադրանքները կատարել է ընդունելի միջին որակով, ներկայացրել է հանձնարարված քանակի արտալսարանային ինքնուրույն աշխատանքներ, մասնակցություն է ունեցել սեմինար և պրակտիկ աշխատանքներին, ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային ամփոփումներին ցուցաբերած գիտելիքներում առկա են թերություններ, որոնք բավարար են դասընթացի հիմնական գաղափարների ընկալման համար:

«E» – եթե ինչ-որ չափով թերացել է մասնակցել լսարանային պարապմունքներին, ունի բացթողումներ, պահանջվող առաջադրանքները կատարել է միջին որակով, ներկայացրել է նվազագույն քանակի արտալսարանային աշխատանքներ, որոշ չափով մասնակցել է սեմինար և պրակտիկ աշխատանքներին, ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային ամփոփումներին դրսևորել գիտելիքներ,որոնք բավարարում են դրական նիշին անհրաժեշտ նվազագույն մակարդակ:

«FX» –եթե թերացել է դասընթացներին ակտիվ մասնակցելուց, բավարար չափով չի կատարել առաջադրանքները /կամ կատարել է դրանց միայն մի մասը/, սեմինար և պրակտիկ պարապմունքներին բավարար ակտիվություն չի ցուցաբերել, ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային ամփոփումներին ներկայացրել է առաջադրանքների մի մասը կամ պատասխանել է ոչ բոլոր հարցերին, որոնք բավարար չեն դասընթացի հիմնական գաղափարների ընկալման համար:

«F» –եթե գիտելիքների գնահատման նվազագույն շեմը չի ապահովել: Դրական գնահատվելու համար ուսանողը պետք է մինչ վերջին կուրսի ավարտական կիսակյակը վերահանձնի տվյալ դասընթացը:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Գնահատողի գործողությունների նկարագիր

Կարողությունը	**Կատարման չափանիշը**
Ուսանողի գնահատման պլանավորում	Համոզվել, որ ապահովված են ուսանողի գնահատման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Ուսանողի հետ քննարկել գնահատման բոլոր պայմաններն ու պահանջները: Ուսանողին պարզաբանել գնահատմանը վերաբերող բոլոր հարցերը: Ստուգել գնահատման գործընթացի՝ ուսանողի ընկալումը:
Գնահատման իրականացում	Ապահովել ուսանողի համար բոլոր անհրաժեշտ ռեսուրսների մատչելիությունը: Գնահատման բոլոր մասնակիցների համար ապահովել անվտանգ միջավայր: Կիրառել գնահատման տարբեր մեթոդներ՝ ըստ գնահատման բաղադրիչների: Համոզվել, որ ապացույցները (վկայությունները) վավերական են, ճշգրիտ և բավարար: Աշխատել գնահատման գործընթացում ընդգրկված այլ անձանց հետ/ընթերակա,ամբիոնի վարիչ/:
Ուսանողի հետ հետադարձ կապի ապահովում և աջակցության տրամադրում	Հետևել գնահատման ընթացքում ուսանողի կատարողականին: Ուսանողին տրամադրել պատշաճ և կառուցողական արձագանք գնահատման յուրաքանչյուր առաջադրանքից հետո: Հստակ բացատրել գնահատման արդյունքում կայացրած որոշումը: Ուսանողն բավարար չգնահատելու դեպքում տրամադրել համապատասխան երաշխավորություններ նրա հետագա կատարելագործման վերաբերյալ:

Ուսանողի նվաճումների մասին որոշման կայացում	Զննել ապացույցները ուսումնառության արդյունքների կատարման չափանիշներին համապատասխանության տեսանկյունից: Որոշարկել կարողությունների բացերը և առաջարկել հետագա կատա-ռելագործում ֆորմալ և/կամ ոչ ֆորմալ ուսումնառության միջոցով:
Գնահատման արդյունքների արձանագրում	Համապատասխան կանոնակարգերով և ընթացակարգերով սահմանված ժամկետում կատարել բոլոր պահանջվող գրառումները: Համոզվել, որ գրառումները կատարված են պատշաճ կերպով: Սահմանված կարգով տեղեկություններ տրամադրել համապատասխան անձանց (կառույցներին):

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՈՒՍԱՆՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՎՄ	ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄ	ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ և ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՓՈԽԱՆՑԵԼԻ և ՓՈԽԿԻՐԱՌԵԼԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԻՄՆԱԲԱՌԵՐ/ ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԲԱՌԵՐ
	Համապատասխան գործոնի շրջանակներում ուսանողի պատասխանը/ ներկայացված աշխատանքը ցույց է տալիս	*Համապատասխան գործոնի շրջանակներում ուսանողի պատասխանը/ ներկայացված աշխատանքը ցույց է տալիս*	*Համապատասխան գործոնի շրջանակներում ուսանողի պատասխանը/ ներկայացված աշխատանքը ցույց է տալիս*	
100 - 90	Գերազանց և բացառիկ գիտելիքի ձեռքբերում և ըմբռնողություն, տվյալ առարկայի կամ մասնագիտության մեթոդաբանության խորը և պատճառաբանված ընկալում	Կիրառական կարողությունների գերա զանց կիրառում և բացառիկ կարողու թյունների դրսևորում, ստեղծագործական և անկախ մոտեցումների ցուցաբերում	ՄԿԾ-ի, դասընթացի և ապագա մասնագիտության շրջանակի հետ կապված փոխանցելի և փոխկիրառելի կարողությունների գերազանց կիրառում և բացառիկ կարողությունների դրսևորում	Գերազանց, Անկախ, Ստեղծագործակա ն, Բացառիկ
89-80	Շատ լավ և բազմակողմանի գիտելիքի լավ և բազմակողմանի ձեռքբերում և ըմբռնողություն, տվյալ դասընթացի կամ մասնագիտության մեթոդաբանու թյան խոր և պատճառաբանված ընկալում	Կիրառական կարողությունների գերազանց կիրառում և կարողու թյունների դրսևորում, նոր մեթոդների կիրառում	ՄԿԾ-ի, դասընթացի և ապագա մասնագիտության շրջանակի հետ կապված փոխանցելի և փոխկիրառելի կարողությունների լավ կիրառում և կայացած կարողությունների դրսևորում	ԾԳերազանց, Բազմակողմանի Կայացած
79-70	հաստատուն և զգալի գիտելիքի ձեռքբերում և ըմբռնողություն, տվյալ մասնագիտության կամ դասընթացյի շուրջ համապատաս խան մեկնաբանության կատա ռում, մեթոդաբանության պատճառաբանված ընկալում	Կիրառական կարողությունների հաստա տուն կիրառում՝փորձարկման տարբեր մեթոդների կիրառությամբ	ՄԿԾ-ի, դասընթացի և ապագա մասնագիտության շրջանակի հետ կապված փոխանցելի և փոխկիրառելի կարողությունների հաստատուն և զգալի կիրառում	Հաստատուն Պատճառաբան ված Մեթոդներով հիմնավորված Զգալի

69-65	Գիտելիքի ձեռքբերում և ըմբռնողություն, տվյալ դասընթացին կամ մասնագիտությանը համապատասխան մասնագիտական մոտեցման ցուցաբերում,համապատասխան մեթոդաբանության առկայություն	Կիրառական կարողությունների կիրա ռում՝ համապատասխան մասնագիտա կան մոտեցմամբ տվյալ դասընթացի և մասնագիտության նկատմամբ, լավ ձևավորված, պատշաճ մեթոդների և վերահսկողական մոտեցումների ցուցաբերում	ՄԿԾ-ի, դասընթացի և ապագա մասնագիտության շրջանակի հետ կապված փոխանցելի և փոխկիրառելի կարողությունների կիրառում	Վերահսկվող, Համապատաս խան քննադական, պատշաճ
64-60	Բավարար գիտելիքի ձեռքբերում և կիրառում, տվյալ դասընթացի կամ Մասնագիտության մեթոդաբանությա նը իրազեկ սակայն մակերեսային մոտեցման ցուցաբերում	Կիրառական կարողությունների բավա ռար կիրառում, բայց համընդհանուր մոտեցման ցուցաբերում ընտրված դասընթացի կամ մասնագիտության վերաբերյալ	ՄԿԾ-ի, դասընթացի և ապագա մասնագիտության շրջանակի հետ կապված փոխանցելի և փոխկիրառելի կարողություն ների բավարար կիրառում	Բավարար Պատճառաբանվա ծ Մակերեսային
59-41	Սահմանափակ և ոչ բավարար գիտելիքի ձեռքբերում և ըմբռնում, ոչ պատճառաբանված և խիստ տարրա կան սահմանափակ կարողություն	Կիրառական կարողությունների սահմանափակ կիրառում	ՄԿԾ-ի, դասընթացի և ապագա մասնագիտության շրջանակի հետ կապված փոխանցելի և փոխկիրառելի կարողությունների սահմանափակ կիրառում	Սահմանափակ, տարրական
40-0	Թերի գիտելիքի ձեռքբերում	Կիրառական կարողությունների թերի կիրառում	ՄԿԾ-ի, դասընթացի և ապագա մասնագիտության շրջանակի հետ կապված փոխանցելի և փոխկիրառելի կարողությունների թերի կիրառում	Թերի